

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/5

19 հունվարի 2016 թ.

Քննարկվեց «ՕՉՈԱ» ՍՊԸ 02.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 23.11.2015 թ-ի թիվ 6111472 ակտի դեմ:

«ՕՉՈԱ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 29.07.2015թ. թիվ 6111472 հանձնարարագրով իրականացված ստուգման արդյունքում 23.11.2015թ. կազմվել է թիվ 6111472 ակտը: Ակտի 1-ին կնտով լրացուցիչ վճարման է առաջադրվել 2.400.000 դրամ:

Ակտի 1-ին կետով արձանագրվել է. «...«ՕՉՈԱ» ՍՊԸ-ում թվով 8 (ութ) նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներ Արաքս Մամուլյանը /լրագրող/, Լիլիթ Թադևոսյանը /լրագրող/, Տիգրանուհի Մարտիրոսյանը /լրագրող/, Մինաս Սուլխանյանը /բովանդակության պատասխանատու/, Լիլիթ Լալայանը /լրագրող/, Փառանձեմ Վարդանյանը /թողարկող խմբագիր/, Նարինե Սարգսյանը /միջազգային բաժնի լրագրող-խմբագիր/ և Բեթխեհեմ Արաբյանը /լրագրող-երեկոյան խմբագիր/ համարվում են գրավոր չձևակերպված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով (բացակայում է այդ պահին աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր), ընդ որում՝ ՀՏ տեղեկատվական բազայում գործատուի կողմից ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում թվով 4 (չորս) նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողների Արաքս Մամուլյանի, Լիլիթ Թադևոսյանի, Տիգրանուհի Մարտիրոսյանի և Մինաս Սուլխանյանի համար հաշվարկված է աշխատավարձ և եկամտային հարկ, իսկ թվով 2 (երկու) նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողների՝ Լիլիթ Լալայանի, Փառանձեմ Վարդանյանի համար ներկայացված է վարձու աշխատողի գրանցման հայտ»:

«ՕՉՈԱ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն) գտնում է, որ ակտն անհիմն է, հետևյալ պատճառաբանությամբ:

Այսպես, թվով 4 անձանց՝ Լիլիթ Լալայանի, Փառանձեմ Վարդանյանի, Նարինե Սարգսյանի, Բեթխեհեմ Արաբյանի հետ ընկերությունը աշխատանքային հարաբերությունների մեջ չի եղել վերջիններիս համար չի հաշվարկվել աշխատավարձ և եկամտային հարկ: Աշխատանքային հարաբերությունների բացակայությունն արդեն իսկ բացառում է աշխատանքային պայմանագիր չկնքելու կամ աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտ չըղունելու խախտումը, ինչն էլ բացառում է օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառումը՝ այդ մասով: Անհիմն է նաև այն պնդումը, որ Լիլիթ Լալայանի և Փառանձեմ Վարդանյանի համար ներկայացված վարձու աշխատողի գրանցման հայտի հիմքով, Ընկերությունը վերջիններիս հետ գտնվել է աշխատանքային հարաբերությունների մեջ: Լիլիթ Լալայանի, Փառանձեմ Վարդանյանի, Նարինե Սարգսյանի, Բեթխեհեմ Արաբյանի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու վերաբերյալ որևէ ապացույց ստուգողների կողմից չի նշվել, այդպիսի փաստ գոյություն չունի:

Իսկ ինչ վերաբերում է Արաքս Մամուլյանի, Լիլիթ Թադևոսյանի, Տիգրանուհի Մարտիրոսյանի, Մինաս Սուլխանյանի մասով աշխատանքի ընդունման մասին

անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի առկայությանը, ապա պետք է նշել, որ Ընկերությունը նրանց համար հաշվարկել է աշխատավարձ և հարկային մարմին ներկայացրել եկամտային հարկի հաշվարկները, կատարել է վճարումներ: Ընկերությունն աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց հետ պայմանագրեր կնքելուց չի խուսափել, վերջիններիս առաջարկվել է կնքել աշխատանքային պայմանագրեր, սակայն ստացել է մերժում և այդ հիմքով դադարեցրել է աշխատանքային հարաբերությունները:

Նման պայմաններում Ընկերությունն աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու փաստը թաքցնելու նպատակ չի հետապնդել, ձեռնարկել է համապատասխան գործողություններ աշխատողների հետ աշխատանքային պայմանագրեր կնքելու ուղղությամբ:

Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը սահմանված է ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 1259-Ն որոշմամբ՝ որպես որոշման Հավելված 1 (այսուհետ՝ կարգ):

Այսինքն, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառումը հնարավոր է միայն կարգին համապատասխան իրականացվող գործողությունների արդյունքում կազմված արձանագրության հիման վրա:

Կարգով սահմանված են ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց՝ արձանագրություն կազմելու համար իրականացվող գործողությունները, մասնավորապես կարգի 4-րդ կետով սահմանված է.

«Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու համար ստուգում իրականացնող անձինք իրականացնում են հետևյալ քայլերը՝

1) գործատուից պահանջում են փաստացի աշխատանք կատարող, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած (Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի իմաստով՝ աշխատանքային հարաբերությունների մեջ նախկինում գտնված) անձանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը, իսկ անհրաժեշտության և առկայության դեպքում՝ նաև գործատուի կողմից հաստատված հաստիքացուցակը.

2) կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր՝ բացառությամբ՝

ա. գործատուի մոտ ուսումնական, արտադրական կամ գիտահետազոտական պրակտիկա անցնող ուսանողների կամ գործատուի մոտ վերապատրաստվող անձանց, եթե գործատուի մոտ առկա է նշված փաստը հիմնավորող ապացույց (գործատուի և ուսումնական հաստատության միջև գրավոր պայմանագիր, ուսումնական հաստատության կողմից գործատուի մոտ գործուղված՝ պրակտիկա անցնող ուսանողների կամ վերապատրաստում անցնող անձանց ցանկ),

բ. քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա գործատուին ծառայություններ մատուցող կամ գործատուի համար աշխատանքներ կատարող ֆիզիկական անձանց (եթե առկա է համապատասխան գրավոր պայմանագիր, գրավոր համաձայնություն)։

3) փաստաթղթերի ուսումնասիրությամբ, գործատուից գրավոր բացատրություններ վերցնելով՝ պարզում են սույն կետի 2-րդ ենթակետով կազմված ցանկում ներառված անձանց կողմից իրականացվող կամ ստուգվող ժամանակաշրջանում իրականացված աշխատանքային պարտականությունների բնույթը։

4) սույն կետի 2-րդ ենթակետում նշված ցանկում ներառված անձանց բացատրում են հայտարարություն տալուց հրաժարվելու նրանց իրավունքների մասին և, նրանց համաձայնությամբ, վերցնում են հայտարարություն»։

Կարգը խախտվել է այն իմաստով, որ Ակտում նշված քաղաքացիներից չեն վերցվել հայտարարություններ, բացատրություններ։

Նման պայմաններում ակնհայտ է, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի «գ» ենթակետը կիրառելի չէ, ուստի, ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 23.11.2015թ. թիվ 6111472 ակտը։

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության։

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 29.07.2015 թ-ի թիվ 6111472 հանձնարարագրի համաձայն «ՕԶՈԱ» ՍՊԸ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում։ Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 23.11.2015 թ-ի թիվ 6111472 ակտը (այսուհետ նաև Ակտ)։

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ համաձայն ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության կողմից ստացված նյութերի, ստուգում իրականացնող հարկային տեսուչների և «ՕԶՈԱ» ՍՊԸ տնօրենի կողմից կազմված տեղեկանքի, առաջնորդվելով ՀՀ Կառավարության 25.07.2013թ-ի «Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը սահմանելու մասին» թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետով «ՕԶՈԱ» ՍՊԸ-ում թվով 8 (ութ) նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներ՝ Արաքս Մամուլյանը /լրագրող/, Լիլիթ Թադևոսյանը /լրագրող/, Տիգրանուհի Մարտիրոսյանը /լրագրող/, Մինաս Սուվխանյանը /բովանդակության պատասխանատու/, Լիլիթ Լալայանը /լրագրող/, Փառանձեմ Վարդանյանը /թողարկող խմբագիր/, Նարինե Սարգսյանը /միջազգային բաժնի լրագրող-խմբագիր/ և Բեթսեհեմ Արաբյանը /լրագրող-երեկոյան խմբագիր/ համարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված (բացակայում է այդ պահին աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր)։ Ընդ որում, ՀՏ տեղեկատվական բազայում գործատուի կողմից ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում թվով 4 (չորս) նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողների՝ Արաքս Մամուլյանի, Լիլիթ Թադևոսյանի, Տիգրանուհի

Մարտիրոսյանի, Մինաս Սուվխանյանի համար հաշվարկված է աշխատավարձ և եկամտային հարկ, իսկ թվով 2 (երկու) նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողների՝ Լիլիթ Լալայանի, Փառանձեմ Վարդանյանի համար ներկայացված է վարձու աշխատողի գրանցման հայտ: Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի գ) ենթակետի եկամտային հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.400.000 դրամ:

Քննարկվող դեպքում Ակտում հիշատակված թվով 8 անձանց կողմից 27.05.2015 թ-ին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչություն է ներկայացվել բողոք «ՕԶՈԱ» ՍՊԸ նորանշանակ տնօրեն Եվա Ադամյանի կողմից ՀՀ Աշխատանքային օրենսգրքով նախատեսված պահանջները խախտելու, այն է՝ ընկերության կողմից Ակտում հիշատակված թվով 8 քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագրեր չկնքելու վերաբերյալ: Նշված բողոքը վերահասցեագրվել է ՀՀ ֆինանսների նախարարություն, որի հիման վրա ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունում նախապատրաստվել են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության ՀՀ Քննչական Կոմիտեի Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք մարաշ վարչական շրջանների քննչական բաժնին հասցեագրված 20.07.2015 թ-ի գրությամբ խնդրվել է տրամադրել քննվող թիվ 13202815 քրեական գործում առկա ընկերության վերոգրյալ թվով 8 աշխատակիցների վերաբերյալ բացատրությունների լուսապատճենները: Արդյունքում, ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությանը տրամադրվել են ընկերության թվով 6 աշխատակիցների (Ա.Մամուլյանի, Լ.Թադևոսյանի, Տ.Մարտիրոսյանի, Ն.Սարգսյանի, Փ.Վարդանյանի, Լ.Լալայանի) վերաբերյալ բացատրությունների պատճենները:

Այնուհետև, ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունում ձեռք բերված ապացույցները ուղարկվել են ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ՝ «ՕԶՈԱ» ՍՊԸ-ում աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում կատարելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի կողմից 29.07.2015 թ-ին հրապարակվել է թիվ 6111472 հանձնարարագիրը «ՕԶՈԱ» ՍՊԸ-ում աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ:

Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք, ուսումնասիրելով ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության կողմից տրամադրված նյութերը, ինչպես նաև ստուգման ընթացքում ձեռք բերված այլ ապացույցները, եկել են եզրակացության, որ «ՕԶՈԱ» ՍՊԸ-ում թվով 8 (ութ) նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներ համարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված:

Տվյալ դեպքում գործում առկա ապացույցները հիմնավորում են վերոգրյալ խախտումն հիմնավորված լինելու և այն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արձանագրված լինելու հանգամանքը: Այսպես, ստուգման ընթացքում՝ 20.08.2015 թ-ին, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից կազմվել է ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող, ինչպես նաև նախկինում գործատուի մոտ փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ եղած այն անձանց վերաբերյալ տեղեկանք

(այսուհետ՝ Տեղեկանք), որոնց մասով գործատուն չի ներկայացրել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական կամ գրավոր պայմանագիր:

Տեղեկանքի համաձայն ընկերության կողմից տրամադրված աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը, գրավոր պայմանագրերը համեմատվել են ստուգման ընթացքում փաստացի աշխատանք կատարող, ինչպես նաև ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի իմաստով՝ աշխատանքային հարաբերությունների մեջ նախկինում գտնված անձանց հետ: Արդյունքում պարզվել է, որ թվով 8 անձանց (ակտում հիշատակված անձինք) վերաբերյալ ընկերությունը չի ներկայացրել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր: Տեղեկանքը կազմվել է ընկերության տնօրենի մասնակցությամբ և ստորագրված է վերջինիս կողմից:

Բացի այդ, խախտումն արձանագրվել է ՀՀ Կառավարության 25.07.2013թ. թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, ստուգման ընթացքում՝ 12.11.2015 թ-ին, «ՕՉՈԱ» ՍՊԸ-ում աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու արձանագրման նպատակով կազմվել է նշված որոշման հավելված թիվ 2-ով սահմանված արձանագրությունը, որում արտացոլված են Ակտի 1-ին կետում նշված թվով 8 անձանց վերաբերյալ անհրաժեշտ տվյալները: Ընդ որում, նշված արձանագրությունը կազմվել է ընկերության տնօրենի մասնակցությամբ և ստորագրված է վերջինիս կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ հիմնավորվել է ընկերության կողմից Ակտի 1-ին կետում նշված անձանց աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու հանգամանքը, որի համար կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 23.11.2015 թ-ի թիվ 6111472 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ